# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ապրիլի 2025 թվականի N 0442-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Սայաթ-Նովա փողոց 2/12 հասցեում քաղաքացի Սայիդ Ալիի Ուսոյանի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող 55.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված՝ ավտոտեխսպասարկման կետը՝ 58.0քմ արտաքին և 48.8քմ ներքին մակերեսով 200.0 քմ մակերսով հողամաս Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն է ճանաչվել և օրինականացվել է: Քաղաքացի Սայիդ Ալիի Ուսոյանի կողմից դիմում է ներկայացվել համայնքապետարան 58. 0 քմ ընդհանուր արտաքին մակերեսով շինությունների զբաղեցրած և օգտագործման համար անհրաժեշտ 55.0 քմ մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով իրեն օտարելու մասին: Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35 կետի բ) ենթակետով և 36-րդ կետով, հիմք ընդունելով Սայիդ Ալիի Ուսոյանի 18.03.2025թ. թիվ 1470 դիմումը

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Սայաթ-Նովա փողոց 2/12 հասցեում /սեփականության վկայական թիվ 26022025-04-0048/ գտնվող ինքնակամ կառուցված շինությունը՝ 58.0 քմ արտաքին և 48.8 քմ ներքին մակերեսով օտարել Սայիդ Ալիի Ուսոյանի՝ բազային տուրքի 90-ապատիկի չափով 1 քմ 12798 դրամով ընդհանուր 742284 (յոթ հարյուր քառասուն երկու հազար երկու հարյուր ութանասունչորս) ՀՀ դրամ, իսկ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող 55.0 քմ մակերեսով հողամասը օտարել՝ հողամասի կադաստրային

արժեքով՝ 1 քմ 1877.7 դրամով՝ ընդհանուր համար 103274 /մեկ հարյուր երեք հազար երկու հարյուր յոթանասունչորս/ ՀՀ դրամ, ընդհանուր առմամբ արժեքը կազմում է՝ 845558 /ութ հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր հիսունութ/ ՀՀ դրամ,:

2.Վաճառքի գնին հավելվում են մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 26000 (քսանվեցհազար) ՀՀ դրամ: Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է վճարել 871558 (ութ հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ էմտնում 871558 (ութ հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ օրինականացման գումարը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո, անշարժ գույքը ձեռքբերողի կողմից 15-օրյա ժամկետում սահմանված վճարները չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

*2025թ. ապրիլի 01*
*ք. Արմավիր*